ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2012թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ԴՐԱՄԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր Ռուբեն Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հայաստանի ազգային պատկերասրահի ճակատային հատվածում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌՈՒԲԵՆ ԴՐԱՄԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ անվանի արվեստաբան, Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր, առաջին տնօրեն ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Գրիգորի Դրամբյանը ծնվել է 1891 թվականին:

Ռ. Դրամբյանը մեծ ներդրում է ունեցել թանգարանային գործի կազմակերպման և հայկական արվեստագիտության զարգացման գործում, որոնք իրենց արտացոլումն են գտել նրա բազմաթիվ գրքերում, հոդվածներում ու զեկուցումներում, հայ կերպարվեստի պատմության ամփոփ ակնարկներում: Նա մեկն էր նրանցից, ով դրել է հայ միջնադարյան մանրանկարչության ուսումնասիրման ամուր հիմքերը:

Ռ.Դրամբյանի գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում գեղարվեստական քննադատությունը: Նրան են պատկանում ժամանակակից արվեստի հրատապ հարցերին նվիրված տասնյակ հոդվածներ:

Ռուբեն Դրամբյանը մահացել է 1991 թվականին:

Հաշվի առնելով Ռուբեն Դրամբյանի մեծ ներդրումը Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադրման գործում և Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Փ. Միրզոյանի և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Ա.Աղասյանի միջնորդությունները՝ Ռուբեն Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակ տեղադրելու վերաբերյալ, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Ռուբեն Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը:

Ռուբեն Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հայաստանի ազգային պատկերասրահի ճակատային հատվածում տեղադրելու վերաբերյալ հարցը քննարկվել է Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում և ներկայացվել է դրական կարծիք:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌՈՒԲԵՆ ԴՐԱՄԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռուբեն Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌՈՒԲԵՆ ԴՐԱՄԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռուբեն Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ